Արձանագրություն N 4

«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ կարիքների համար ուլտրաձայնային ախտորոշման սարքի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«29» «սեպտեմբերի» 2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ — Ա. Բաբայան
Հանձնաժողովի անդամներ — Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Հ.Խուրշուդյան

Հանձնաժողովի քարտուղար — Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 18.08.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի սեպտեմբերի 8-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի սեպտեմբերի 9ին ժամը 11:00-ին: 05.09.2025թ. հրավերում կատարվել է փոփոխություն: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի սեպտեմբերի 22-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 15:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ	armedtechnicallc@gmail.com	02604367
4	«Դիավանտ» ՍՊԸ	lawyer@diavant.am	00255375

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա է շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները

գնահատող հանձնաժողովը 03.07.2025թ. որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակցին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 23.09.2025թ. ծանուցել է մասնակցին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումը.

«Դիավանտ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ չափաբաժնի մասով առաջարկած ապրանքի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Սահմանված ժամկետում շտկումը կատարված է եղել և **25**.09.2025թ. էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էր մասնակցի կողմից ներկայացված պահանջված շտկումները: Գնահատող հանձնաժողովը գնահատելով մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթուղթը արձանագրել է, որ ներկայացված շտկումները կատարված են ամբողջովին և ապրանքի ամբողջական նկարագրի՝ տեխնիկական բնութագրի ներկայացված շտկված տարբերակը համապատասխանում է հրավերի պահանջներին: Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը կայացրել է հետևյալ որոշումը՝

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները «Դիավանտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ա. Բաբայան)

23.09.2025թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ ստացվել են հետևյալ հարցումները, որոնց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համապատասխան տրամադրվել են հետևյալ պարզաբանումները.

Հարցում 1-ին՝ ներկայացվել է 21.08.2025թ.

«Հարգելի գործընկեր, Համաձայն «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 3 բաժնի՝ Ձեզ ենք ներկայացնում պարզաբանման հարցում. 1. Տեխնիկական բնութագրում

սահմանված է հետևայալ ցուցանիշը՝ «Մազանոթային քարտեզագրման ռեժիմ՝ բարձր տարածական, ժամանակային թողունակությամբ և կադրերի բարձր հաճախականությամբ կամ անոթներում արյան հոսքի իրական ժամանակում ճշգրիտ վիզուալիզացիա ոչ դոպլերային թվային տեխնոլոգիայով, միկրոցիրկուլյար հունի սահմանում և վիզուալիզացիա; Հոդերի, ավշային հանգույցների և այլ փոքր կառուցվածքների արյան հոսքի վիզուալիզացիա», համաձայն որի պահանջվում է կամ մազանոթային քարտեզագրման ռեժիմ՝ բարձր տարածական, ժամանակային թողունակությամբ և կադրերի բարձր հաճախականությամբ կամ անոթներում արյան հոսքի իրական ժամանակում ճշգրիտ վիզուալիզացիա ոչ դոպլերային թվային տեխնոլոգիայով, միկրոցիրկուլյար հունի սահմանում և վիզուալիզացիա, սակայն նշված ցուցնիշին հաջորդող պահանջով սահմանվում է «Անոթավորման ինդեքս՝ մազանոթային քարտեզագրման հիման վրա» և նշված չէ նույն ֆունկցիան ոչ դեպլերային թվային տեխնոլոգիայի մասով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ և խնդրում ենք, հնարավորության դեպքում, կատարել հրավերի համապատասխան փոփոխություն: 2. Տեխնիկական բնութագրում սահմանված է հետևայալ ցուցանիշը՝ «Անընդհատ-ալիքային դոպլեր ռեժիմ PRF միջակայքը ոչ պակաս քան 1400-ից 30,000 Հց», սակայն որոշ արտադրողներ այս ռեժիմի նկարագրության համար իրենց պաշտոնական տեխնիկական փաստաթղթերում օգտագործում են ոչ թե PRF ցուցանիշը, այլ արագության ցուցանիշը, խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք արագության ցուցանիշի որ տիրույթն է բավարարում Պատվիրատուի պահանջին, և հնարավորության դեպքում կատարել հրավերի համապատասխան փոփոխություն: 3. Տեխնիկական բնութագրից պարզ է դառնում, որ Պատվիրատուն պահանջում է ծավալային նավիգացիոն ծրագիր (fusion), սակայն սարքի տվիչների նկարագրում բացակայում է ծավալային նավիգացիոն ծրագրի հետ համատեղելի լինելու պահանջը, ինչի հետևանքով սարքի վրա փաստացի հնարավոր չի լինելու կիրառել ծավալային նավիգացիոն ծրագիրը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք կամ սարքի նկարագրից հանել ծավալային նավիգացիոն ծրագիրը (ինչը էականորեն կնվազեցնի ձեռքբերվող սարքի արժեքը), կամ էլ սահմանել ծավալային նավիգացիոն ծրագրի հետ տվիչների համատեղելիության պահանջ: 4. Ծավալային նավիգացիայի ծրագրով բիոպսիաներ իրականացնելու համար (ինչը նույնպես պահանջվում է տեխնիկական բնութագրով) անհրաժեշտ են բազմանգամյա օգտագործման սենսորներ և զանազան ծախսանյութեր (ասեղներ, ստիլետներ և այլն), առանց որոնց հնարավոր չի լինելու իրականացնել տեխնիկական բնութագրով սահմանված շագանակագեղձի ֆյուժն ուղղորդված բիոպսիաները: Արդյոք վերոնշյալը պահանջվում է տեխնիկական բնութագրի «Լրակազմը ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ սարքերը և պարագաները, որոնք անհրաժեշտ են լիարժեք գործունեության համար» կետով, և եթե այո, ապա խնդրում ենք նշել թե ինչ քանակներով:»

Պարզաբանում 1՝ տրամադրվել է 05.09.2025թ.

«Հարգելի մասնակից,

Հարգելի գործընկեր, հայտնում եմ, որ հրավերում կկատարվեն փոփոխություններ:

Հարցում 2՝ ներկայացվել է 11.09.2025թ.

«Հարգելի գործընկեր, Հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրի տարբեր տողերում նշված են հարված ալիքային էլաստոգրաֆիային վերաբերող բնութագրիչներ, որոնք, ենթադրում եմ, տեխնիկական վրիպակի պատճառով տարբերվում են՝ ըստ թարգմանությունների: Այսպես օրինակ՝ հենց առաջին տողում նշված է «լյարդի մուլտիպարամետրիկ հետազոտություններ ներառյալ հարված-ալիքային էլաստոգրաֆիա», որը թարգմանված է, համապատասխանաբար, «multiparametric liver examinations including shock wave elastography» անգլերենում և «многопараметрические исследования печени включая ударно-волновую эластографию»՝ ռուսերենում: Սակայն նույն բնութագրում կա այսպիսի տող «Մասնագիտացված ծրագիր՝ հյուսվածքների առաձգականությունը գնահատելու համար՝ օգտագործելով հարված-ալիքային էլաստոգրաֆիա», որը թարգմանված է համապատասխանաբար «A specialized program for assessing tissue elasticity by shear wave elastography» անգլերենում և «Специализированная программа для оценки эластичности тканей методом эластографии сдвиговой волной»: Նույն բնութագրիչում, ընդամենը մի քանի տող ներքևում, նույն հարված-ալիքային էլաստոգրաֆիայի կողքը փակագծերում ռուսերենով գրված է /сдвиговой волны/, ու

թարգմանություններն էլ համապատասխանաբար «shear wave» և «сдвиговой волны» արտահայտություններով են, ինչից ենթադրում ենք, որ ամբողջ տեխնիկական բնութագրում արված-ալիքային էլաստոգրաֆիա արտահայտության դեպքում պիտի նկատի ունենալ հենց shear wave էլաստոգրաֆիան: Ըստ այդմ, խնդրում եմ պարզաբանել, արդյոք առաջին տողում և մնացած տողերում նկատի ուներ shear wave էլաստոգրաֆիան և արդյոք պահանջվում է հենց shear wave էլաստոգրաֆիայի հնարավորությամբ սարք:»

Պարզաբանում 2՝ տրամադրվել է 15.09.2025թ.

«Հարգելի գործընկեր:

«Հարգելի գործընկեր, Տեխնիկական բնութագրի տարբեր տողերում նշված հարված-ալիքային էլաստոգրաֆիա արտահայտությունը պետք է հասկանալ անգլերենով՝ shear wave elastography, իսկ ռուսերենով՝ сдвигово-волновая эластография:»

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45/1» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝

- «Դիավանտ» ՍՊԸ-ն՝ 71,200,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/45/1» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 30.09.2025թ.-ից մինչև 10.10.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բաբայան

Անդամներ՝ ---------- Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

---------- Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ ---------- Է. Սարգսյան